

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ 7-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը մի մեծ եղբայրակցություն է քրիստոնեական տարբեր դավանությունների պատկանող հին և նոր եկեղեցիների, որոնք ձգտում են իրականացնել իրենց միությունը Հիսուս Քրիստոսով: Այն հիմնվել է 1948 թվականին Ամստերդամում (Հոլադիա): Այսօր եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին անդամակցում են շուրջ 100 երկրներում գործող 317 եկեղեցիներ, որոնք փաստորեն ներկայացնում են քրիստոնեական բոլոր դավանությունները: Այս եկեղեցիների հավատացյալների ընդհանուր թիվը հասնում է 400 միլիոնի: Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) համագումարները տեղի են ունենում 7 կամ 8 տարին մեկ անգամ աշխարհի այս կամ այն ցամաքամասում: ԵՀԽ-ի ղեկավար մարմիններն են՝ Կենտրոնական կոմիտեն, որը հավաքվում է 12—18 ամիսը մեկ անգամ, և Գործադիր կոմիտեն, որը հավաքվում է տարին երկու անգամ: Կենտրոնական կոմիտեն ներկայումս բաղկացած է 150 անդամներից, որոնցից 5-ը ներկայացնում են ԵՀԽ-ի գործակից եկեղեցիներ:

ԵՀԽ-ի գլխավոր ֆարտուղարը և 8 համանախագահները ի պաշտոնե մաս են կազմում Գործադիր կոմիտեին, որը բաղկացած է ընդամենը 27 անդամներից:

1991 թվականի փետրվարի 7—20 օրերին Ավստրալիայի մայրաքաղաք Կանբերայում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կանբերայում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 7-րդ համագումարը: Համագումարին մասնակցում էին քրիստոնեական տարբեր դավանությունների պատկանող ԵՀԽ-ի անդամ եկեղեցիների 950 ներկայացուցիչներ, դիտորդներ, խորհրդականներ, պաշտոնական հրավիրյալներ, ուղիղի, հեռուստատեսության և լրատվական գործակալությունների բազմաթիվ աշխատակիցներ, հյուրեր, թվով շուրջ 4000 հոգի:

Համագումարին, հանուն Մայր Աթոռի, իր մասնակցությունն էր բերում նաև Հայ Առաքելական Եկեղեցու 12 հոգուց բաղկացած պատվիրակությունը՝ գլխավորությամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի:

Համաժողովի գլխավոր թեման էր՝ «Սուրբ Հոգի, ե՛կ և վերանորոգի՛ր ամբողջ ստեղծագործությունը»:

Փետրվարի 7-ին, առավոտյան, տեղի ունեցավ համաժողովի բացումը՝ այդ առթիվ հատուկ կազմակերպված կրոնական հանդիսավոր պաշտամունքի:

քով: Այնուհետև լիազումար նիստում ԵՀԽ-ի քարտուղարության հրավերով ժողովականներին ուղղված պաշտոնական ելույթով հանդես եկավ Ավստրալիայի վարչապետը, որը ջերմորեն ողջունեց ներկաներին, գնահատեց ԵՀԽ-ի խաղաղարար առաքելությունը ժամանակակից աշխարհում՝ հաջողություն ցանկանալով համագումարի աշխատանքներին: Վարչապետի ելույթից հետո ժողովականները ուշադրությամբ լսեցին ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրոյի ընդարձակ հաշվետու զեկուցումը անցնող յոթ տարիների ընթացքում ԵՀԽ-ի բազմաճյուղ գործունեության շուրջ: Հետևյալ օրը լիազումար նիստում համաժողովը լսեց նաև Կենտրոնական կոմիտեի ատենապետ դոկտ. Հանց Յոհակիմ Հելդի զեկուցումը:

Այնուհետև համագումարի աշխատանքներն ընթացան չորս գլխավոր խմբերում՝ հետևյալ նշանաբաններով. առաջին խմբի նշանաբանն էր՝ «Սուրբ Հոգի, կյանքի աղբյուր, պահպանի՛ր քո ստեղծագործությունը», երկրորդ խմբինը՝ «Ծշմարտության Հոգի, ազատագրի՛ր մեզ», երրորդինը՝ «Միության Հոգի, հաշտեցրո՛ւ քո ժողովրդին», չորրորդինը՝ «Սուրբ Հոգի, կերպարանափոխի՛ր և սրբացրո՛ւ մեզ»: Վերոհիշյալ չորս խմբերից յուրաքանչյուրը բաժանվեց 10-ից 12 ենթախմբերի, որոնցում քննարկվեցին կրոնական, աստվածաբանական, ընկերային, քաղաքական բնույթի բազմազան հարցեր: Ուշադրության կենտրոնում էին հատկապես Պարսից ծոցում տեղի ունեցող պատերազմի հարցը, Մերձավոր Արևելքի լարված դրության հարցը, ցեղային խտրականության և ապարտեիդի հարցը Հարավային Աֆրիկայում և այլուր, Բալթյան հանրապետություններում և Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունների հարցը, ազգամիջյան բախումների և տեղաբնիկ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարցը, կանանց դերը Եկեղեցում ԵՀԽ-ի ղեկավար օրգաններում երիտասարդների մասնակցության հարցը, ապա նաև Մկրտության, Հաղորդության և Քահանայության խորհուրդների նկատմամբ միասնական տեսակետ և դիրք որդեգրելու հարցը և այլն: Բացի այդ, համագումարի օրերին, վարչական բնույթի համապատասխան աշխատանքներ էին կատարվում ԵՀԽ-ի 9 տարբեր կոմիտեներում:

Հայ Եկեղեցու ներկայացուցիչները բոլորն էլ, որոնք մասնակցում էին տարբեր ենթախմբերի աշխատանքներին, ի շարս այլ հարցերի, առանձին կարևորությամբ ժողովականների ուշադրությանը հանձնեցին Արցախում մարդու իրավունքի ոտնահարման հարցը՝ ամեն ջանք գործադրելով, որ այն հատուկ քննարկման առարկա դառնա ԵՀԽ-ի վերին օրգաններում: Դրանից բացի, Հայ Եկեղեցու պատվիրակությունը խմբագրեց և ԵՀԽ-ի քարտուղարությանը ներկայացրեց Գանձասարի և Ամարասի վանքերի մասին պատմական համառոտ տեղեկություններ պարունակող պաշտոնական մի գրություն, որի մեջ ծանր մտահոգություն էր հայտնվում նաև այն մասին, որ հայկական գործող այդ վանքերը ներկայումս ենթակա են ադրբեջանական իշխանությունների կողմից բռնագրավվելու և փակվելու վտանգին: Չբավարարվելով դրանով՝ պատվիրակությունը վերոհիշյալ գրությունը բազմացնելով բաժանեց համաժողովին ներկա արտասահմանյան զանազան թերթերի բազմատասնյակ թղթակիցների՝ այն հրապարակելու առաջարկությամբ: Այդ նույն օրերին Կանբերայում ստացվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի ընդարձակ հեռագիրը՝ ուղղված ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրոյին, հեռագիր, որի մեջ Հայոց Հայրապետը խնդրում էր համաժողովից բողոքի ձայն բարձրացնել Արցախում հայության դեմ կատարվող անարդար և անօրինական արարքների համար, և որը վճռական դեր

կատարեց այդ առթիվ: Շնորհիվ այս հետևողական աշխատանքների, ԵՀԽ-ի «Արդիական հարցերի կոմիտեի» կողմից համաժողովի հաստատմանը ներկայացված զեկուցագրում, ի շարս այլ հայտարարությունների, տեղ գրավեց նաև Արցախի հարցի վերաբերյալ ԵՀԽ-ի հայտարարության նախագիծը, որը, որոշ լրացումներից հետո, միաձայն հաստատվեց համագումարի կողմից: Ահա այդ հայտարարությունը:

«Մենք մտահոգված ենք Ղարաբաղում տիրող կացության վատթարացմամբ: Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը զոհ է դառնում խտրականության, ահաբեկչությունների և բռնությունների: Ղարաբաղի շրջանը, որը պատմականորեն մաս է կազմում Հայաստանի, մշտական լարվածության աղբյուր է դարձել Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունների միջև: ԵՀԽ-ն իր հայտարարություններով և հրապարակումներով բազմիցս այս հարցի վրա է հրավիրել Եկեղեցիների, կառավարությունների և հասարակական կարծիքի ուշադրությունը: Ահա թե ինչու շահագրգռված բոլոր կողմերից պահանջում ենք, որ որոնե՞ն ու գտնե՞ն խաղաղ մի լուծում այդ շրջանում առաջացած կոնֆլիկտի: Բացի այդ, Խորհրդային Միության ղեկավարներից մասնավորապես պահանջում ենք՝

ա. Անմիջական միջոցներ ձեռք առնել՝ պաշտպանելու համար հայ ազգաբնակչության կրոնական, մշակութային և ազգային օրինական շահերը:

բ. Հատուկ միջոցներ ձեռք առնել՝ ապահովելու համար այդ շրջանի բոլոր բնակիչների մարդկային իրավունքները:

Վերջապես ԵՀԽ-ի անդամ բոլոր Եկեղեցիներից պահանջում ենք, որ շարունակեն հավատարմորեն աղոթել, մասնավորապես այդ շրջանի հայ ժողովրդի համար, որը պայքարում է հանուն արդարության և խաղաղության»:

Փետրվարի 10-ին, կիրակի օրը, առավոտյան, Տ. Ներսես արքեպիսկոպոսը Կանքերայի Հովհաննես 23-րդ Պապի անվան կաթոլիկ եկեղեցում մատուցեց սուրբ պատարագ, որին ներկա էին ԵՀԽ-ի անդամ հին արևելյան դավանակից Եկեղեցիների բարձրաստիճան հոգևոր ներկայացուցիչներ, օրթոդոքս Եկեղեցիների պատվիրակությունների հոգևորական և աշխարհական անդամներ, Հայ Եկեղեցու երկու Աթոռների պատվիրակությունները՝ իրենց լրիվ կազմով, ինչպես նաև Սիդնեյից ժամանած և Կանքերայում բնակվող բազմաթիվ հայ հավատացյալներ: Պատարագի երգեցողությունը կատարում էր Սիդնեյի հայոց եկեղեցու երկսեռ երգչախումբը՝ խմբավար պրն. Էլմասյանի ղեկավարությամբ: «Հայր մեր»-ից առաջ հոգեշահ քարոզ արտասանեց հնդիկ մալաբար Եկեղեցու միտրոպոլիտ և ԵՀԽ-ի համանախագահ Մար Գրիգորիոսը:

Համագումարի վերջին օրերին Կանքերայի Ցուցադրության ընդարձակ սրահում տեղի ունեցան մի շարք լիազումար նիստեր, որոնց ընթացքում ընտրվեցին ԵՀԽ-ի 8 նոր համանախագահներ, ինչպես նաև Կենտրոնական կոմիտեի նոր կազմ՝ բաղկացած 150 հոգուց: Նորընտիր Կենտրոնական կոմիտեի կազմում ընդգրկվեցին Հայ Առաքելական Եկեղեցու երկու ներկայացուցիչներ՝ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը և օրիորդ Նենսի Բասմաջյանը՝ Նյու Յորքից:

Փետրվարի 20-ին, չորեքշաբթի օրը, ԵՀԽ-ի 7-րդ համագումարն ավարտեց իր աշխատանքները՝ ընդունելով մի շարք կարևոր որոշումներ քննարկված հարցերի շուրջ: Նույն օրը, երեկոյան, տեղի ունեցավ փակման հանդիսավոր արարողություն՝ սուրբգրական ընթերցվածներով, աղոթքներով և հո-

գևոր երգերով, որոնց իր մասնակցությունը բերեց նաև Հայ Եկեղեցին՝ ի դեմս Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ և Մայր Աթոռի պատվիրակության անդամ Տ. Աղան եպիսկոպոս Պալիոզյանի:

Համաժողովի փակումից հետո, փետրվարի 21-ին, նորընտիր Կենտրոնական կոմիտեի նիստում ձայների մեծամասնությամբ կոմիտեի ատենապետ (մոդերատոր) ընտրվեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ, Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Տ. Արամ արքեպիսկոպոս Քեշիշյանը:

Ավստրալիայում գտնվելու օրերին Հայ Եկեղեցու պատվիրակության անդամները առիթ ունեցան շփումներ ունենալու ավստրալահայ համայնքի ղեկավար անդամների հետ, ծանոթանալու տեղի ազգային-եկեղեցական կյանքին, Սիդնեյի հայոց եկեղեցում մասնակցելու եկեղեցական մի շարք արարողությունների, այցելելու տեղի հայկական նորաբաց վարժարաններ, իսկ վերադարձի ճանապարհին՝ Սինգապուրում աղոթելու նաև տեղի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ

